

ԲԱԺԱՆՈՐՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշխարհոյ համար
Տարեկան 12 Ժր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Սակերիսայի համար
Տարեկան 3 արշ.
Վեցամսեայ 1.50 »

ՎԱՆՆԻՒԿ ՎՃԻՔԻՆԼԻ

Պատկերակ սոյր առաջին
երեսին համար 40 սակերի
Կ. իսկ վերջին երեսին համար 20 սակերի Կ. երեսին
աւելի սակերներու համար
20 Ո՛՛՛ զեղը կըլլայ:

Պաշխարհոյ համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՆԱԲԻ ԵՒ ԵՄԱԿԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նախակ եւ դրամ դրկիչ
Խմբագրութեանս հասցեին

Редакция на вестникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեն տրուիր

Արտասահմանի համար ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)



ՄԱՀԱԳՈՅԺ

ԳՐԻԳՈՐ ԶՍԱՇԵՆԱՆՑԻ

Պոլսոյ հայ թերթերէն կիմա-
նանք որ հռչակաւոր հրապարա-
կագիր և հայ որբերկներու բարե-
բար Գրիգոր Զանչեանց ամսոյս
18ին վախճաներ է Բեդքերսպուր-
կի մէջ:

ՀԱՅՎԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ
ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Վարժարանիս աշակերտ աւել փա-
փաքող պատուարժան ծնողաց կը
յայտարարեմ որ, Հայկական կըր-
թարանի Գ. տարեշրջանը կսկսի յա-
ռաջիկայ սեպտեմբեր 1/14ին, միե-
նոյն ընդարձակ եւ օգտուեն շէնքին
մէջ, առանց փոփոխման ծրագրի եւ
աշակցութեամբ միեւնոյն ուսուցչա-
կան մարմնոյն, որուն պիտի ընկե-
րանայ նաեւ Ֆրանսացի ընդհանուր
հսկող մը:

Լրացուցիչ դասընթացքի աշա-
կերտներուն համար ուսման առարկա-
ներու մեծագոյն մաս մը պիտի դասա-
խօսուի ֆրանսերէն լեզուով: Դասա-
ւանդութեան միեւնոյն եղանակը,
աւելի նեղ սահմանի մէջ եւ աստի-
ճանաբար, ի գործ պիտի դրուի
բարձրագոյն ու միջին դասընթացք-
ներուն համար ալ:

Ուսմանց ու գիտութեանց բոլոր
կարեւոր ճիւղերը կաւանդուին:

Օտար լեզուներէն պարտաւորիչ են
Պոլկարերէնը եւ Թրանսերէնը, իսկ
կամաւոր են Անգլիերէնը եւ Գերմա-
ներէնը, որոնք պիտի աւանդուին
Թրանսերէնով:

Ձութակի եւ դաշնակի դասեր ալ
կը տրուին մասնաւոր վճարումներով:
Գիշերօթիկներու համար առողջ
անունը, կատարեալ մաքրութիւն
եւ ընտանեկան խնամք:

Տարեթոյակներու համար պատ-
րաստ եմ ամէն գիւրդի թիւն բնա-
յիւ, եթէ անոնց կանոնաւոր վճա-
րումը կանխաւ ապահովուի ո՛ր եւ է
միջոցաւ:

Հայկական կրթարանի
Հիմնադիր-Տնօրէն
ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

1—4
(—)(—)

ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՀԱՅՐԸ

Հայ ժողովուրդը բարձր ձիւ-
րերով, գաղափարական և միեւ-
նոյն միջոցին սրտացաւ հարա-
զատ զաւակներ շատ քիչ է ունե-
ցել: Անգուժ և անագորոյն մահն
էլ կարծես այդ փոքրիկ թիւն
անգամ նախանձելով իր մանգա-
ղով անսպասելի կերպով պակ-
սեցրել է այդ փոքրիկ թիւը,
ճիշդ այն վայրկեաններու մէջ
հայութիւնը ամենամեծ տագնապի
մէջ է գտնվել:

Այսօր էլ այդ անկուշտ մահը մեր
ժողովրդից խնց նրա անզուգա-
կան զաւակներից մէկին էլ: «Հայ
որբերկների հայրը», թրքահայի
դատի ամենաշեղբուն կարող պաշտ-
պաններից մէկը—Գրիգոր Զան-
չեան—«այլեւս չըկայ»:

Խնդրեմ ասացէք, ո՞ր հայը
կարող է հաշտվել Զանչեանի չեւ-
թեան հետ:

Ձե, շատ անգուժ է հայերիս
ճակատագիրը...

Մի՞թէ կարելի է երեւակայել,
որ էլ չի բարասում այն ազնիւ
սիրտը, որում բուռն արձագանք
էր գտնում ամեն մի մարդկային
բարոյական պահանջ և տառա-
պանք...

Գիտե՛ք, Զանչեան եզակի հայ
գաղափարական տիպերից մէկն
էր. նա իբր ուս հրապարակա-
գիր, իր փառքի զէնթիւն հա-
սաւ պաշտպանելով ուս ժողո-
վրդի իրաւունքները՝ Ալէքսանդր
Երրորդի բանակաւորական տրամա-
դրութիւնների դէմ անվախօրէն
եւ ահա հէնց այդ միջոցների
ասպարէզ կկաւ թրքահայերի
դատը պաշտպանելու ուս մա-
մուլի միջոցաւ. իսկ հայատեաց
բունակալի մահից յետոյ հայ որ-
բերկներին պաշտպան կանգ-
նեց...

Օտարի գովեստն ու երկրպա-
ղութիւնը Զանչեանին չըլլացրին.
նա երբէք չը մոռացաւ որ ինքը
մի դժբախտ, տանջվող և ար-
համարված ժողովրդի զաւակ է և
իր ասպետական ու կարող ձեռքը

մեկնեց չարատանջ հայութեան
Ռուսիայի պէս երկրի մէջ, ուր
հայը առանց վտանգի չի կարող
օգտակար հանդիսանալ իր տան-
ջվող եղբորը:

Զանչեան չը կայ, Հայաստանի
որբերկներ, արդեօք ի՞նչ պէտք է
զգան ձեր քնքուշ սրտիկները.
Հարո՞ղ էք դիմանալ այդ բո-
թին: Ձը մոռանաք ձեր հօրը.
յիշեցէք նրան, նա ձեզ պաշտ-
պան հանդիսացաւ, որ դուք մե-
ծանաք և ձեր պարտականու-
թիւնը կատարէք դէպի դժբախտ,
զերի հայրենիքը. նա ուղեց որ
ձեր մեռած ու ստրկացած հայ-
րերի աեզ՝ հայրենավրէժ մի սե-
րունդ ստեղծվի:

Իսկ դուք, օտար ժողովրդների
մէջ դիրք, փառք ունեցող ըն-
դունակ հայեր, խոնարհվեցէք
Զանչեանի ստուերի առջև, ա-
մաչեցէք նրա յիշատակից և
զգացէք ու համարվեցէք թէ իս-
կապէս ազնիւ, մարդասէր և լու-
սամիտ հայը, ինչ միջավայրի
մէջ էլ որ լինի, որ երկրի մէջ
էլ որ ապրի, երբէք չի կարող
մոռանալ որ ինքը դժբախտ,
թշուառ հայ ժողովրդի զաւակն
է և մեծ, շատ մեծ պարտալա-
նութիւն ունի դէպի իր հարա-
զատ ժողովուրդը:

ՎԱՐՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 21 Յուլիս

Հումպէրթօ թագաւորին մահ-
ուն լուրը հոս ալ կայծակի արա-
գութեամբ տարածուեցաւ, բայց
անիշխանականի մը ատրճանակի
երեք գնդակներով ինկած ըլլա-
լը և ոչ մէկ տեղական թերթի
թոյլատրուեցաւ գրել: Կատան
Պրատի անունը և ոչ մէկ թերթ
հրապարակ հանեց: Արդիւուած
է ըսել թէ Հումպէրթօ «զար-
նուեցաւ», այլ պիտի ըսուի «յան-
կարճամահ» եղաւ...

Ձեմ դիտեր ընթերցող, ար-
դեօք տեսա՞՞՞ ես ձմրան խիստ
ձիւներուն ատենը կաքաւի որ:
Հանճարեղ թռչունը գլուխը կը
խոթէ ձիւներուն մէջը, ամբողջ
մարմինը դուրս կը ձգէ և ատան-
կով կը կարծէ՝ թէ որսորդներու
աչքէն ծածկուած կը մնայ, որ-
սորդները զինքը այլեւս չեն
տեսներ: Ահա ճիշդ այս ձեւով
կը վարուի և Համիտ. տեղական
ողորմելի թերթերուն կարգիլէ
գրել, բայց երկու օր ետքը կը
հասնին Վիէնայի, Բէշտի, Պուլ-
կարիոյ թերթերը, ամէն մարդ
ազատ—արձակ կը կարգայ սրճա-
րաններու և ճաշարաններու մէջ.
անդրապէտի անգամ սկանջը
կիյնայ լուրը և այն ատեն թըր-
քական «կաքաւի յիմարութիւնը»
աւելի ծաղրելի, աւելի զլուելի
կերեւայ:

Հումպէրթօ սպաննուեցաւ, Հա-
միտի քունը աչքերէն փախաւ.
Կըսուի որ զարհուրելի ջղային
վիճակի մը մէջ է, անդադար
կատանի և անոր ատրճանակին
ուրուականները կերեւան աչքին:

Մի՛ սարսափի՛ր, փառիշահ,
քանի քո ժողովրդի տուած այ-
լասեռած զաւակները կան: Վախ-
ցի՛ր միայն այն ատեն, երբ
ժէօն-թիւրք ըսուած «յեզափո-
խական կտրիճներու» մէջ, «գէթ
մէկ հատիկ մը անձնազոհ մարդ»
երեւայ... Սարսի՛ր այն ատեն
և միայն այն ատեն:

Եւրոպական թերթերը լուրեր
բերին, որ կատան Պրատի երբ
թէ ընկերներէն մին, թրիէտտի
մէջ ձերբակալուելով ասկէ ամիս
մը առաջ, ըսեր է որ իտալիոյ
թագաւորը և այլ չորս թագա-
ւորներ պիտի սպաննուին, զիս
ձերբակալեցիք, իմ «քոմբա-
նիօններս» անպատճառ կիրա-
կանացնեն տրուած որոշումը:
Ու Համիտ կը մտածէ, իսկ եթէ
ասա 4 էն մին ալ ես ըլլամ: Օ՛-
մի խնդար ընթերցող, գող սիր-
տը դող, իսկ «ահը վեր է քան
Դաւթայ մահը»:

Սա տեսակ թագակիր անձերու
այսօրինակ մահերը կրնան վերջ-
նականապէս խենթ դարձնել ի-
րենց կռնակի վրայ շատ մը զո-

հերոս արիւնը կրող վեհագետները :

Չեմ յիշեր թէ արդեօք անցեալ նամակիս մէջ գրեցի՞ր Գրք. Բ. Բիլիսէի Գաղղիական հիւպատոսի թարգման Տօ. Թ. Գամարոսի «աւազակներէ» փախցուիլը 5—6 հոգի «աւազակներ» բռներ լեռը տարեր էին մարդը և կառավարութեան 4000 լիրա կուզէին իբր փրկանք : Լուրը հոս հասաւ, Գաղղիական գեոսպան Բօնսթան իսկոյն Բ. Գուռ և պալատ իրար անցուց : Հրամաններ գացին Գրք. Բ. Բիլիսէ (էտիրնէի վիլայէթ) :

Եւ ո՞վ կրէ որ թուրքերը անխելք են : Անանկ ապուր մը լեռան սա անգամ, որ Սվազու գետին ալ իր կենաց մէջը երբէք չէ կերեր :

Հրաման տրուեցաւ առ ենթադրեալ «աւազակներու» ամէն ազգականներն ու բարեկամները ժողովել, բանտը լեցնել ու տանջել : Ի հարկէ «ազգական» անունով կնքուեցան և շրջակայքի ամէն հարուստ պուլկարները Պաշտօնեայները լաւ մը մաքրազարդեցին առ երեւակայական «ազգականներու» գրպանները, իսկ կառավարութիւնը 2000է աւելի ոսկի վճարեց և Գաղղիական հիւպատակ տօ. Թ. Թ. Գ. գնեց «աւազակներու» ձեռքէն :

Այժմ չեմ գիտեր թէ արդեօք կառավարութեան 2000 ոսկին էր աւելի թէ բանտարկուածներու տուած կաշառքները . . .

Իէշ լուրեր կը հասնին Պաշտօնեայական սահմանէն : Իբր թէ «Համիդիէ-ալայը» յարձակուեր է և Պարսկական սահմաններէն ներս եղած երեք գիւղի վրայ և կողոպտած, պարսիկ զօրքը վրայ

է հասեր, աղուոր մը ջարդեր, քանի մը տառնեակ ալ զօրք ու Համիդիական զերի բռներ պահեր է :

Աս լուրին ստուգութիւնը չեմ կրնար երաշխաւորել, ժողովրդի բերանն է, մանաւանդ պարսիկներու : Երբեք կարճ ժամանակէ մը նոր լուրեր կուգան :

Թուրքիա և Համալսարան . . . Իրարմէ այնչա՞ր հեռու հասկացողութիւններ են, որչափ երկինքը գետինէն : Բայց, բնթերցող, առ ալ ամէնօրեայ խօսակցութեան ու լրագրութեան նիւթ է :

Համիտ կուզէ իր 25ամեայ գահակալութիւնը անմահացնել երկու խոշոր գործերով, Հիճազի երկաթուղիով և Պոլսոյ թրքական Համալսարանով :

Երանի՜ հաւատացելոց :

ԲԱԺ
ՍՈՒՒԻՆԱ, 11 Յուլիս

Շարաթ մը առաջ, քաղաքիս թուրք հիւպատոսը յայտարարութիւն մը հանեց որով կը հրաւիրեր բոլոր Օսմանեան հպատակները իսլամ, քրիստոնեայ փութալ հիւպատոսարան, իրենց անունը արձանագրել տալու պետական տետրակի մը մէջ : Սպառնալով որ այս կոչին չը պատասխանողները ալ հպատակ չը պիտի ճանչցուն :

Շարաթը անցաւ և ոչ ոք պատասխանեց այս հրաւերին, որով հիւպատոսը ստիպուած եղաւ հետեւեալ ծանուցագիրը փակցունել տալ բոլոր հպատակներու խանութներին ու սրճարանները :

«Օսմանեան կայսրութեան ամէն ցեղի և կրօնքի պատկանող հպատակ ազգայիններ և ժողովուրդներ, կայսերական հրամանի մը համեմատ, պարտաւոր

են գալ հիւպատոսարան իրենց անունները արձանագրելու . որպէս զի ի պահանջել հարկին տէրութիւնը կարողանայ զանոնք ճանչնալ իբրեւ հպատակ, և թէ հիւպատոսարան կարենայ միջամտել և պաշտպանել զանոնք հարկ եղած տանն :

Իսկ անոնք որ չեն համակերպիր մեր այս հրաւերին, և այլ և այլ պատճառներով չեն ուզեր արձանագրուիլ, կը դադրին Օսմանեան հպատակ ճանչցուելէ, և չը պիտի պաշտպանուին ինչ նեղութեան կամ վտանգի մէջ ալ ըլլան :

Մինչև հիւզ օր պայմանաժամ կուտամ, անկէ ետքը եկողները չը պիտի ընդունիմ. գալիքին վրայ դուք մտածեցէք : Ես անպարտ եմ» :

(Կնիթ)
Հիւպատոսարանի
Սուլիմա, 10 Յուլիս 1900

Կը տեսնէք թուրք պաշտօնեաները որքան հպատակասէր դարձած են, և չէ թէ միայն բուն երկրին մէջ, այլ նոյնիսկ օտարութեան մէջն ալ կուզեն անոնց շահերը պաշտպանել (° ° °) ուզող թող հաւատայ . . .

Սա այն հիւպատոսն է որ երկու տարի առաջ տեղական իշխանութեան ձեռքով ժողովեց բոլոր հայոց անցագրերը, որպէս զի նորոգէ և անով քիչ մըն ալ իր գրպանը պարարէ . բայց շատերունը մինչև այսօր իր քովը կը մնայ :

ՀԱՄԱԶԱՍՊ
Թ. ԲԱԶԱՐՃՐԳ, 18 Յուլիս

«Ստախօսին լեզուն հազար» է կըսէ ժողովրդական առածը, անա այս անգամ ալ վառնայի մէկ լրագրին՝ քաղաքիս իշխակիցը իր թերթի 52րդ թիւին մէջ, երեք աստղանիշներու քօղին տակ ապաւինած, սուտի եւ զրպարտութեանց տեղադրուած մը թափած է Գեր Գ. Մ. Վ. Նալպանտեանի գլխուն : Ճշմարտութիւնը ու անկեղծութիւնը պարտք կը դնեն

վրաս անգամ մըն ալ հրապարակաւ մատնանիշ ընել յիշեալի ստութիւնները ու զրպարտութիւնները որպէս զի Շարժումի Պատ. Ընթերցողք գիտնան թէ տակաւին որ աստիճան անորակելի արարածներ կը գտնուին :

Այդ տխրահաշակ թղթակցի գրութեան համաձայն որպէս թէ անպարտ ընելի հայութեան մէկ մասը իրեն առաջնորդ ունենալով Գ. Նալպանտեան վարդապետ, պատրիարքարանի իրաւասութիւնը ստորնացնել ջանացած է եւ թէ թաղ. ընտրութիւնը տիրող կառավարական օրինօք եղած եւ զրկուած է նախարարութեան ի վառնացումն . . . Ինչպէս Շարժումի 239 թուոյն և այդ թերթի 47 թուոյն մէջ ընտրողական ժողովոյ ատենագրութեան Ծիար Մ. Գաղազեան հետագրաւ ծանուցած էր, տեղոյս թաղ. ընտրութիւնը Սահ. օրինօք կատարուել, միեւնոյն անուրանալի ճշմարտութիւնը կրկնած էինք մենք Շարժումի 242 թիւին մէջ եւ անա միեւնոյնը կը հաստատեմ թէ ընտրութիւնը Սահմանագրութեան համաձայն եղած է : Վասն զի առաւել քան տասը օտարահպատակ գաղթականներ մասնակցած են ընտրութեանց, եւ թէ թրքականակալ մըն ալ (Կիրակոս աղա Յարութիւնեան) թաղ. խորհրդոյ անդամ ընտրուած է, արդ՛ քանի որ ասոնք իրականութիւնը ապացուցանող կենդանի փաստեր են, ինչո՞ւ բացարձակապէս կուրանաք, գիտե՞ք արդեօք տեղական օրինաց տրամագրութեանները որ չի թոյլատրեր օտարահպատակները ընտրելի եւ ընտրող ըլլալու վառնացնելու համար ընտրուածներու ցանկը երբէք նախարարութեան զրկուած չէ, ինչպէս միեւնոյն թղթակցութեան մըս գրած եմ թէ արն. ժողովը իր տեղեկագիրը պատրաստելով զրկեց առ Գերապատի Բ. Մ. Վ. Պաղճեան ի վառնացումն» եւ արդէն այցելու հովիւ Գերապատի Պաղճեան հայրը ընտրութիւնը օրինաւոր գտնելով վառնացումն է ամոռոյս կին, ուրեմն ո՞ր մնաց ձեր հրապարակաւ պոչոտալը թէ նախարարութեան զրկուած է, եթէ երբէք նախարարութեան զրկուած ըլլար այլ եւս հարկ կը մնար այցելու հովիւն վառնացնելու, անա ձեր վերան բաց ստութիւնը ինքնին յայտնի է :

Պ. նամակագիրը շարունակելով իր զրպարտութիւնը կըսէ «Ինչ գործնունը, զոր ես կամաւ չէի յիշած : Հիմա հարցնեմ ընթերցողներուս թէ այս խոստովանութիւնը ինքնին ապացոյց մը չէ՞ եղելութեան ստուգութեանը : Ես իմ յօդուածիս մէջ «հայ լրտես մը» ըսելով անցեր էի, մինչդեռ դուք, Պ. Սիրտ, ազնիւ կերպով կը խոստովանիք թէ ոստիկանութեան պաշտօնատուէն շատ մը գրութիւններ գողցող լրտես հայը—թիւթիւնեմի է : Ուրեմն երկուքնիս ալ համաձայն ենք այս մասին : Թիւթիւնեմի մինչև իր վերջին վարկանքը Սուլթանին հաւատարիմ մէկ գործիքն էր . հոս ալ համամիտ ենք իրար : Կը մնայ հիմայ պարզել այն գաղանիքը թէ ինչպէս Թիւթիւնեմի իր պատօնին եւ իր հաւատարմութեան հակառակ ընթացքի մը մէջ կը գտնուէր : Թիւթիւնեմի գիտել թէ օր մը չէ օր մը իր գլուխը պիտի ուտեն յեղափոխականները . ուստի սկսաւ անոնցմէ մէկ քանիին հետ յարաբերութեան մտնալ, այլ եւ այլ ծառայութիւններ մատուցանելով անոնց : Ահա ձիւղ մաս միջոցին է որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՑ ՊԱՏԱՍԽԱՆ
ԱՌ Պ. ՍԻՐՏ

Այս սիւնակներուն մէջ ձեր սիրելի կեղծ յեղափոխականին վրայ գրածս կերեւի թէ ձեր քունը խանգարեր է, եւ ցաւագար կերպով ելիք զինքը պաշտպանելու ճիգեր կընէք : Սեւ լորդ յոգնութիւն կրեր էք, Պ. Սիրտ, ի գիր առնելով այն քանի մը սիւնակները եւ ուղղելով ինձ իբր «Բաց նամակ» : Ես տակաւին ձեր ջիղերը գրգռող «Իւսաճանի վերջին լրտութիւնը» յօդուածս չի գրած, գիտէի թէ յեղափոխութեան սուրբ անունին տակ ծածկուող այդ մարդուն արբանակները ու միամիտ հետեւողները պիտի արտօնին, — հոգ չէ թէ դուք ձեր կողորդը կը պատուէք ինձ հասկըցնելու համար որ «բնաւ» Արիւսի

կուսակցութեան չէք պատկանիր, տեսէք ես մոխիր կը կլլեմ : Ես ալ կրնամ ըսել որ Գաշնակցական մը չեմ. եւ կերպնում պատուոյս վրայ որ ճիշդ է ըսածս. կրնաք ստուգել, եթէ իմ յօդուածս Շարժումի մէջ լոյս տեսաւ, պատճառը այն է որ Իրաւունք չը պիտի հրատարակէր :

Գալով ձեր նամակին Ա. Բ. Գ. եւն. մասերուն, կը պատասխանեմ .

Ա. Ձեր գիւտը շատ զարմանալի թուեցաւ ինձ «զէնք» եւ «գոյք» բառերու մասին. կերեւի թէ մոռցեր էք որ առաջին անգամ «զէնք» բառը գործածողը ձեր կուսակցութեան գոռունան չաղող թերթերն էին. եւ նոյնիսկ Պ. քաղաքի ճաշարաններէ մէկուն մէջ, թուրքի մը ներկայութեան, տեղի ունեցած վիճարանութիւնը նկարագրեցիք դուք : Իրիօք մոռցա՞ք ասոնք : Մոռցաք որ ձեր փողար թերթերու մէջ նկարագրեցիք նաեւ «ոսկիհիւս զրօշակ» մը, նշանակելով անոր մեծութիւնը (տարածութիւնը), ծանրութիւնը, գինը, եւ այլն, եւ այլն : Ո՞վ Պ. Սիրտ, եւ

թէ դուք ասոնք մոռնալ կը ձեռացընէք, ես կը յիշեցնեմ ձեզի ներկայ սողերովս : Ձեր կուսակցութեան այս մասնութիւնը, (արձակ համարձակ թերթերու մէջ Պ. քաղաքի վրայ խօսիլը), ըսէք, խնդրեմ, «չէօք» Պ. Սիրտ, գաւաճանութիւն չէ՞ :

Բ. «Զօրաւոր գողը իր տէրը կախել կուտայ» կըսէ առածը. դուք ալ, Պ. Սիրտ, ամէն բան ընելէ վերջը ձէթի նման շուրին երեսը ելլալ կուզէք, Գաշնակցութեան վրայ բեռնելով ձեր կուսակցութեան եպերելի արարքները : Ես Գաշնակցական մը չեմ, կրկին կը պնդեմ, ուստի չեմ գիտեր թէ իրօք Իւսուֆեան ո՞ր կը գտնուէր այսօր. բայց Արիւսի մասնանիշ ընելը թէ նա «Պարսկաստան կը գտնուի», պարզապէս մատնութիւն է կամ տեսակ մը մատնութիւն : Իսկ Դոշուկ այսպէս է ըսեր եւ Շարժում այնպէս, թող իրենք պատասխանեն ձեզի, ես անոնց փաստարարն չեմ :

Գ. Ուրախ եմ որ Պ. Սիրտ կը խոստովանիս նոյնիսկ այն լրտեսին ա-

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պ. Գրիգոր Զանչեանցի մահը զոր կը ծանուցանենք Շարժումի ներկայ թուով, իրաւամբ ամբողջ հայ ազգը կը թախծի ընդհանուր սուգի մը մէջ:

Այս ուռուհայ բարերար անձնաւորութիւն՝ թէև ինք հարուստ մէկը չէր, բայց միջոցը գտած էր մեր շատ մը մեծկակ հարուստներէն աւելի օգտակար ըլլալ մեր տարաբաղդ ազգին: Իր հրատարակած ուսերէն հաւաքածոյին արդիւնքովը 12 որբանոցներ կը պահէր և միշտ կը ջանար անոնց թիւը բարձրացնելու:

Թէև այսօր այդ որբանոցներու գոյութիւնը 2-3 տարուան համար ապահովուած է, բայց Զանչեանցի յանկարծական մահը կուգայ վերջ մը դնել այն բարեգործութեանց շարքին, որոնք այնքան փրկարար և արդիւնաւոր եղան:

Պոլիս կը խորհին այդ մեծ ազգային բարերարի յիշատակին ընծայել պէտք եղած յարգանքը, անշուշտ արտասահմանի հայութիւնն ալ պիտի փութայ իր անկեղծ ցաւն ու յարգանքն արտայայտել:

Պատրիարքը Իտալիոյ դեսպանատունը երթալով իր ցաւակցութիւնը յայտնեց է Հումպէրթօի մահուան համար, նմանապէս հեռագիր մը քաշեց է Մարգարիտա այրի թագուհիին:

Թիֆլիզի Օսմ. հիւպատոսը ուշադրութեան առնելով որ Ռուսիա գացող Օսմ. հպատակներու մէջ այնպիսիներ կան որոնք ընտանիքի և զաւակներու տէր ըլլալով, Ռուսիոյ մէջ նորէն կամուսնանան. ուստի այս վիճակին վերջ մը տալու համար տեղեկագրեր է կաթողիկոսին:

Կաթողիկոսը այս մասին պատասխանեց է թէ հիւպատոսարանին և Պոլիս պատրիարքարանին:

Վեհ. Հայրապետը տեղեկացուցած է Պոլիս որ Վան Սալնապատի որբանոցը պիտի հոգացուի նատրեանցի նուիրատուութեամբ: Նպաստից յանձնաժողովը նկատելով որ այդ որբանոցի ծախքը կը վճարեն արդէն Նիւեօքի հայուհիները, որոշեցին այնպէս մը կարգադրել որ, երկու կողմէն եկած նուէրներն թէ՛ Վանի, քաղաքին մէջի և թէ՛ Սալնապատի որբանոցն ալ օգտուի:

Պոլսէն կը գրեն մեզ թէ՛ «Ժէօն Թիւրքերու վերջին յայտարարութիւնը հայերուն վերագրուելով շատ մը ձեռքակալութիւններ եղած են»:

Կը խնդրենք մեր ընթերցողներէն որ, եթէ այդ յայտարարութիւնը պարունակող «Օսմանլը» թերթը ունին, հաճին օրինակ մը զրկել խմբագրութեանս, որ միջոցը ունի հասցունել զանի ուր

որ անկէ և այսպէս քանի մը անմեղ հայերու ազատութիւնը ձեռք բերել:

Քաղաքիս հայ ընթերցարանը՝ որ քանի մը երիտասարդներու ջանքովը բացուած էր, բաժանորդներու քիչութեան պատճառով չի կրնալով իր ծախսերը գոցել, նորէն փակուեցաւ:

Ս. Էջմիածնի Գեորգեան ճեմարանը այս տարի ալ ըստ սովորութեան, թուրքիացի մէկ քանի ուսանողներ ընդունելու համար, Վեհ. Կաթողիկոսը գրած է պատրիարքարան:

Թօգատի հայերը գեղեցիկ և օրինակելի մտածումով մը ծախսեր են իրենց եկեղեցիին արծաթեղէնները և արդիւնքովը 1600 ոսկի արժողութիւնով չէնք մը դնել են, որու հատկապէս պիտի յատկանայ վարժարանին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԻՇՆԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Իտալիոյ նոր թագաւոր Վիկտոր Էմանուէլ Գ. որ Պոլսեան ջուրերը կը գտնուէր, հօրը սպաննութեան լուրը առնելով անմիջապէս վերադարձեց է Իտալիա: Զինքը գիմաւորող բազմութեան մէջէն երկու անիշխանականներ կը պօսան «Կեցցէ անիշխանականութիւն, մահ թողաւորներու»: Ասոնք անմիջապէս կը ձերբակալուին և կը խոստովանին թէ իրենք մեծկակ կազմակերպութիւն մը ունին:

Բրասի, Հումպէրթօի սպաննիչը չէ ուրացած թէ թագաւորը ըսպաննելու համար մասնաւոր հրաման մը ընդունած էր անիշխանական կազմակերպութենէ մը. կը կարծուի թէ ոճրագործութիւնը որոշուեց է Բաթէրսոնի մէջ:

Սալվաթօր-Քէնթօվալի անուն անձ մը որ Բրասիի հետ մէկտեղ Ամերիկայէն եկած մտադիր էր Բարիզ երթալու, ձերբակալուած է Էլպա կղզւոյն մէջ: Կըսուի թէ անոր վրայէն գտնուած են շատ մը նամակներ և ուրիշ հինգ անիշխանականներու լուսանկարներ, վրանին «ոճիր» նշանակուած, նմանապէս սպանական բաց նամակ մը:

Մեր նախորդ թուով Բարիզի մէջ Պարսից ճահին անցուցած փոանդը գրեցինք. այս մասին Եւրոպական վերջին թերթերը աւելի տարբեր և աւելի նոր մանրամասնութիւններ կը բերեն:

Շահը առտուան ժամը 9ին բաց կառքով պալատէն դուրս կելլար իր քովը ունենալով Մեծ Վէզիրը և դիմացը հրամանատար մը: Յանկարծ միջահասակ, գործաւորի հագուստով անձ մը կը ճեղքէ պահնորդներու շղթայն և կը

փորձէ ճահին մօտենալ, ձեռքը ունենալով վեց հարուածեան մը զոր կուզէ ճահին:

Մեծ Վէզիրը այս շարժումը նշմարելով, անմիջապէս կառքէն կը ցաթկէ և զէնքը կը խլէ, զինուորներն ալ կը ձերբակալեն մարդը:

Ամբոխը որ Շահը գիտելու եկած էր, սպանալով կը յարձակի անիշխանականին վրայ, սակայն ոստիկանները կը յաջողին զսպել և ձերբակալուածը կառքնորդին բանա, ուր ոստիկանապետին հարցումներուն սա պատասխանը միայն կուտայ:

«Ատրիկա իմ և խղճիս գիտնալիք բանն է միայն, և ցաւ կը յայտնէ որ չէ յաջողած իր փորձին մէջ»:

Շահը հակառակ այս միջադէպին կը շարունակէ իր պտոյտը Վէրսայի մէջ:

Ինչպէս կերելի այս դէպքերէն, անիշխանականները տենդոտ գործունէութեան մէջ են. և իրաւամբ Եւրոպական մամուլը յուզուած է և կը խնդրէ որ անմիջական միջոցներ ձեռք առնուին, միջազգային էական օրէնքներ կազմուին անիշխանական լուրջ կազմակերպութեան դէմ, որպէս զի նորանոր աղէտներ չը պատահին:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Ծայրագոյն Արեւելքի մէջ Դաշնակից տէրութեանց զօրքերը սկսած են քայել Բէքիւնի վրայ, բայց աններգաշնակ վիճակի մէջ:

Զի համաձայնելով ընդհանուր հրամանատարի մը ընտրութեան՝ իւրաքանչիւր ազգի բանակ իր հրամանատարի տակ պիտի գործէ առանձին, բան մը որ այնքան ապահովութիւն չի տար յաջող վերջաւորութեան մը:

Թիէն-Չիէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ ձաքոնական յառաջապահ գունդը ետ մղուեց է Զինացիներէ, մօտաւորապէս 150 մեռելով կամ վիրաւոր թողնով:

Ռուսները Թիէն-Չիէն 10 մղոն հեռաւորութեամբ տիրած են բերդի մը, հոն գտնուած 10 հազար չինացիները փախչելու ստիպելով:

Տէլի-Էքսերէսի կը հեռագրեն թէ Զինական զինուորները հիւսիսային կողմերը կը յառաջանան Եանկցէի գաշտագետնին մէջ, հաւանական է որ յարձակում մը գործեն Եւրոպական բանակին վրայ:

Բեթերսպուրկէն կը ծանուցանեն թէ Ռուսական զինուորներ զրկուած են Բօրթ-Արթիւրէն զինաթափ ընելու համար Զինական զինուորները, որոնք հակառակ դաշնագրութեանց Լի-Աօ-Թանկ թերակղզին մտած են:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսի մէջ թրքերէն լեզուով նոր յայտարարութիւն մը հրատարակուած է վերջերս, միւսիւմանները գրգռող Եւրոպացիներուն դէմ և ինպաստ Զինացիներուն:

Սեւամօրթներու համաժողով մը գումարուեց է անցեալ շաբաթու Լոնտոնի մէջ, ուր աշխարհիս չորս ծայրերէն եկած սեւ պատուիրակներն որոշեցին բողոքել ճերմակ ցեղի դէմ, որ հանդէպ իրենց մեծ անիրաւութեանց մէջ է:

Գէշ չէ, Դեղին ցեղէն ետքը Սեւ ցեղն ալ կը պատրաստուի ցոյց մը ընել ձերմակներու դէմ:

Թրանսպալէն եկած հեռագիր մը կըսէ թէ Քրիւկէր հրաման զրկեց է ըրտը Պօէրնեթոն համախմբուել Լիժդէմպուրկի մէջ:

Անգլիական թերթի մը կը հաղորդեն որ վերջերս Օտեսայի մէջ խառնակութիւններ պատահեցին: Ռուսերը յարձակում գործեցին հրէական թաղին վրայ և անոնց շատ մը վաճառատուները թալանեցին:

150ի չափ հրէաներ ծանրապէս վիրաւորած հիւանդանոց փոխադրուած են. 1200 մարդիկ ձերբակալուած են:

Երկուշաբթի առտու քաղաքիս մէջ թախտ պանդոկապետ մը, կայծակէն զարնուելով մեռաւ:

Ա Ձ Դ

ԼՈՅՍ ՏԵՅՍԱՒ Թ. Կ. ՊՕՆՃՈՒՐԵԱՆԻ
Նոր Ընթերցարան
Բ. ՏԱՐԻ
ՊԱՏԵՐԱԶԱՐԴ

Կը պարունակէ հրահանգիչ բարոյական պատմութիւններ, իրադատական տեղեկութիւններ, առողջապահական խորատներ և ազգային պատմական կտորներ, ամենքն ալ տղայաց հասկնալի լեզուով և ոճով գրուած: Բազմաթիւ ոտանաւորներ, հանելուկներ և առանձն պիտի նպաստեն ընթերցումը տղուն հաճելի և օգտակար ընելու:

Նոր-Ընթերցարանի այս Բ. տարին ալ պիտի գտնէ անտարակոյս այն ընդունելութիւնը, որուն արժանացաւ Ա. տարին:

Գինն է 1 Ֆրանք. գոնէ 20 օրինակ գնողներու համար 15 Օ/0 զեղջիլ Դիմել հետեւեալ հասցէին:

Յ Կ. Պօնճուրեան
(Պուլկարիա) Վառնայ
Ծանօթ. — Գ. տարին լոյս պիտի տեսնէ յառաջիկայ Սեպտեմբեր ամսոյ սկիզբը:

Ա Ձ Դ

Սերոն Բ. Տէրմիճեան, գիտէ ֆրանսերէն, հայերէն, և տաճկերէն գրաչարութիւն ով որ կուզէ թող հաճի իրեն հետ բանակցել, հասցէն է «Կայրէթ թերթի խմբագրութիւնը»: